

Ճեռն ծովաւ զօրութեամբ բռնութեան  
Հսդյան տանին:

Մակնթացութիւն ծովուց երկիցս պատահչի նմա յընթացս երկոտասան ժամուց:

Բազմաթիւ ազբիւրք քղիւնն ի ժայռից եւ ի լեռանց:

Գետն իսաստիկ արագութենէ, որով  
հօսի՝ ընկալեալ է զանուն Տիգրիսայ-  
քանդի լեղուաւ Պարսից Տիգրիս նետ  
անուանի:

Գետն Յորդանան ի բազում առաջը բաժանի եւ ի ծով անգր հոսի:

Զուրն որպէս զերկիր ունի լինքեան  
զբնակիչո որպէս են ձկունք:

ի տեղի ոտից ձկանց տուեալ են վետուրք, որոց միջնորդութեամբ ի ջուրալուղան, ծածկեալ գոլովլ թեփովլք ածեն զիոքրիկ ձուս, ուստի ելանեն մանրիկ ձկունք, որք խսկայն լողան ի ջուրաեւ գտանեն զօդտակարն ինքեանց զիերակուր:

Ոչ ինչ կենդանի է բազմածին քան  
զձկունս, զորս ամենահաւատի ապա-  
ցուցանեն տարեղք, որոց անհաւատին  
բազմութիւնք ի զանազան գաւառաց  
հիւսիսային ազգաց որսացեալ լինին  
եւ ոչ երբէք կարեն նուազեցուզանել:

$$\left( 1 - \frac{1}{\sqrt{2}} \cos \theta \cos \phi \right).$$

ՄԵԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ Ի ԹԻՒՆ 16:

Երշակ. Բարեաւ ձեզ սիրելի Արամ.  
երեկ ո՞րո՞ք էիք, ես ձեզ շատ պարակցի,  
որ մի նոր բան պատմեմ. դիտեմ որ դուք

շտա սիրում մէք այսպիսի նոր բաներ լսել եւ  
իմանալու:

Երամ. Ի՞նչ կայ սիրելի, ասա խնդրեմ:  
Եղշամէ. Եյս քանի օրուան Մշակը  
կարդացել ես թէ ոչ:

Արտահայտութեած էի գործով՝  
չկարողացի կարդալ:

Արշակ, Ամիսո՞ս որ չես կարգացել, ես  
նորա մէջ կարգացի մի քանի հըտավուն  
յօդուածներ մանուաւանդ ։ «Ո երազառ-  
նանքը ։ Հաւատացի՞ր, որ իս իմ կեան-  
քիս մէջ մի այդպիսի ազատ և նուրբ  
մոքով յօդուած ամենեւին գեռ չեմ  
ահեսի ։

Արամ. Խոչ էր այս թր:

Արշակ. Չեռ խմանում, ինչ կլինի, եղե  
մեր հոգեօրականութեան վերայ էր խօսում:  
Ճշմարիտ ասած մեր հոգեօրականու-  
թեան զեռ շատ քիչ է այդպիսի յան-  
դիմանութիւններ:

Արամ, Այժմ քեզ մօտ Վշակ ունի՞ս,  
խնդրեմ առւը կարդամ։ (Եռնում է  
Վշակը և կարդում, և ապա խոր հա-  
ռաջում)։

Արդակ. Ի՞նչի համար ես այդպէս խոր հառաջում. կարծեմ քեզ վիրայ մեծ ներգործութիւն ունեցաւ այդ դրսածքը:

**Արամ.** Ե հարկէ շատ մեծ աղղեցու-  
թիւն ունեցաւ ինձ վերսպ այդ յօդուածը,  
որովհետեւ **Ծակը** փոխանուակ շնորթեան՝  
կործանմտն է աշխատում:

### Упражнение 1

Եղանձ. Ի՞նչ եմ ասում, դէ լրիր:—Ահա  
ըլլիկ՝ կարծեմ և գու կվկայես, որ գու շատ  
թոյլ և ուստան մէջ. ի հարկէ և թէ տես-  
զեկութիւն ունենայիր մեր աղջի հին և նոր  
կեանքից, եթէ ունենայիր փոքր ինչ ու-

սումն, իսկոյն հասկանալով՝ Մշակի խար-  
դասի և մոլորեցուցիչ զբուածքի թռւնա-  
ւոր զօրութիւնը, չէիր այդպէս շուտ հա-  
մոզուել գորանինգաւոր խօսքերքին, ինչ-  
պէս մի քանիսը մեր միամիտ երիտասարդ-  
ներից, և չէր ձեզ և ձեզանմանների վերայ  
այդպիսի սաստիկ տպաւորութիւն ունե-  
նալ և թշնամացնել հոգեորականութեան  
հետ, կարծելով նոցա վնասակար անդամ  
ազդութեան զլինին, ինչպէս ուսուցանումէ  
Մշակը, այլ կտեսնեիք նորա՝ Մշակի զբ-  
րուածքը լի անպէտք մտքերով, կրքերով,  
հակառակութիւններով, ինքնազովու-  
թիւններով և հրատարակութիւն առանց  
նպատակի և ուղղութեան: Մշակն էլ լաւ  
իմանալով, որ մեր ազգի մէջ դեռ այնպէս  
չէ արծարծուած ուսումն ինչպէս հար-  
կաւորն է, այս պատճառաւ միամիտ սըր-  
տերի մէջ իւր որոմը ցանելց յարմար մի-  
ջոց գտանելով՝ կարծումէ դրանով կարող  
է ազգի առաջեւ իւրեան ներկայացնել՝  
իրեւ լուսաւորիչ ոմն: Ուսաի աշխատումէ  
ներկայացնել ազգի առաջեւ հոգեորակա-  
նութիւնը՝ իրեւ վնասակար զլուխ. որպէս  
զի ազգը Մշակին միմիայն ծանաչէ լուսա-  
ւոր զլուխ և առաջնորդ ամեն գործերի  
մէջ և դառնայ դէպ ինա (Մշակը) ասեա-  
լով. — «Խոնդրումենք, աղաջում և պա-  
ղատում ի սէր Աստուծոյ, որովհետեւ դու  
այդպէս լուսաւոր մարդ ես, մեր հոգեո-  
րականութիւնն էլ մի խաւար անդամ  
ազդութեան զլինին, վասնորոյ դու լիր մեր  
առաջնորդը, հովիւը և մեղ ձգիր դէպ ի  
քո ծանաչած լոյսդ, որ մենք խաւարի մէջ  
չմեռանինք,»: Մշակը սպասումէ սորա,  
բայց ամենեին այս չէ տեսնել, կարելի է  
երազի մէջ տեսնել կոստարուած իւր

այս ցանկութիւնը, սորա խօսք չունիմ,  
բայց ուրիշ ժամանակ լաւ կաներ, որ  
ամենեին այդ մասին յոյս էլ չունենար  
և իւրեան չչարչարէր այդ մասին անգամ  
մտածելով:

**Երան.** Ես այդ ասածներիդ ամենեին  
չեմ համոզվում, որովհետեւ ես ինչքան  
մտածումնամ, որ Մշակի ասածները ձըշ-  
մարիտ են՝ օրինակ. — միթէ՛ ոչխարները  
առանց հովուի կարող են արածելու փոր-  
ձեր փորձել, ինչպէս ասումէ Հայկոր-  
դին, ես այս բանս հաստատ զիտեմ և  
ամենավերջի ռամիկ մարդն էլ զիտէ, և  
չի էլ աեսնուած, որ ոչխարները առանց  
հովուի կարողանան անվեսաս արածել, այս  
անկարելի բան է, ուրեմն Մշակի միաքը  
այնպէս չէ՝ ինչպէս զուբ էք կարծում,  
այլ նա ուղիղ է և ուղիղ է նորու խօս-  
քերը մեր հոգեորականութեան մասին:

**Երան.** Ոիրելի՛, շատ լաւ էք ասում  
Հայկորդու սխալ դատողութեան մասին,  
ես էլ քեզ հետ համաձայն եմ, բայց  
Մշակի այդ մասին գրածն էլ հասկացիր,  
որ աւելի ևս հաստատումէ Հայկորդու  
խօսքը ասելով. — «Ի՞նչ դարմանալի բան  
է, որ ոչխարները ոչ թէ միայն իւրեանք  
իւրեանց են սկսում արածել, բայց և  
փորձեր են փորձում իւրեանց հովիւնե-  
րին էլ արածել, և այլն,»: «Խու ինքտ  
վկայեցիր, որ այս սարսափելի սխալմանքը է  
և անկարելի բան, որ ոչխարները իւրեանք  
առանց հովուի կարողանան արածել:  
բայց Մշակը այս բանիս այնքան հաւա-  
նումէ, որ զարմանալի բան չէ համա-  
րում, մանաւանդ պնդումէ՝ որ ոչխար-  
ները կարող են հովիւներին էլ արածա-  
ցնելց փորձեր փորձել և ոչ միայն իւր-

բեանք արածել։ Եհա այս խօսքերի մէջ տեսնումես թէ որպիսի ատելութիւն, կըքոտ հոգի է երեսւմ։ Եյս հոգին Մըշակի հոգին է։ Եյս խօսքերով չէ բաւականանում յայտնել իւր հոգեոյ կեղտութիւնը, աւելացնումէ և այս, “բաւական է վեղար կամ իտիլաւկայ զլիին ծածկել ոչխարից հոգիւ դառնալոյ համար»։ Մի թէ ուսումնական կոչուած մարդը այդպիսի խօսք կիսոսի՝ ինչ որ խօսումէ մեր լուսաւորուած Մշակը. եթէ ոչխարի զլիին վեղար դնելով ոչխարը հովիւ դառնար, նախ շատ ըստ կլինէր փորձ փորձել իւր (Մշակի) վերայ. Մշակի զըտակը դնել մի ոչխարի գլենի, եթէ ոչխարը խմբագիր դառաւ՝ անշուշտ պիտի հաւատանք, որ ոչխարը վեղար ստանալով հովիւ կդառնայ. այժմս այս բանը մնացել է Մշակի փորձառութեան վերայ։ Եյսպիսի կըքոտ խօսքը ամենաստոր ռամփկ անդրագէտ հայն անդամ չէ խօսում, որովհետեւ նա կարողանումէ մտածել և հասկանալ, որ ոչ թէ միայն իւր համար ամօթ և նախատինքն է իւր հոգեոր հօր այդպիսի ծաղրական բառերով այպանել, ոյլ և ընդդէմ է Յիսուսի հրամանին. — “Ով ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ», Եցւ լսելով Մշակը անպատճառ ծաղը է անելու ասելով. — “Աա ևս հոգեորականաց համար անսխալութիւն է քարոզում, ու Խեղձը չէ հասկանում, որ ես այս քանի խօսքերով ոչ թէ նոցա անսխալ եմ դաւանում, այլ Քրիստոսի աշշակերտութեան պաշտօնի մարդիկ։ Խեղձը չէ հասկանում իւր հոգեոր հայրերի նշանակութիւնը, այլ դոցա ընդունելով՝ իրեւ մի պաշտօնական մարդ, անսանձ

բերանով ինչ ուզումէ խօսումէ, որ անգամ ամենացած մարդոց ասելին անկա ըելի է այժմեան ժամանակի մէջ։ Մշակը լաւ իմանալով միայն այս, որ հոգեորականք Փրկչի հրամանին համաձայն պիտի հարածուին, մանաւանդ իւրեանց ազգիցն և ուրախութեամբ պիտի տանեն իւրեանց վերայ ամենակերպ հալածանք, ուստի աներկիւդ՝ աղաս կերպով հալածումէ նոցա, և եթէ լինի մէկն հարցանի ի՞նչի համար էք այդքան հալածում հոգեորականութեան, Մշակը պատրաստ է պատասխանել, որովհետեւ դոքա Քրիստոսի աշակերտք են, հալածելով փորձումնեմ տեսնել՝ արդեօք ուրախութեամբ տանումնն այդ հալածանքները առանց տըրանջելոյ՝ թէ ոչ։ Իսաց ի սորանից, Մըշակը որովհետեւ իւր սքանչելի ուսումն ստացել է Եւրոպայ և իւր ուսման մեծ զօրութիւնը նրանումէ կայանում, որ շատ լաւ զիտէ Եզիպտական կուռքերի պատմութիւնները և նոցա խորհրդաւոր մեկնութիւնները, ինչպէս ասումէ. — “Օչենիսէ գլուխն են գոյացէլ հոգեւորականն, իսէ աշխարհականն ոդներէց, . . . ուստի եթէ Մշակին թոյլ տաս՝ կանդի իւր լուսաւոր մոքերի վերայ և զանազան փաստերով կհաստատի թէ մեր աստուածը՝ Եզիպտական աստուածներն են, որովհեաւ նորա մէջն է ինքն կրթուել և կարծում թէ հենց ուղեղը իւր գիտացածն է. ինչպէս որ այժմ իսկ պնդումէ, թէ Լուսաւորչի Եկեղեցին ի սկզբանէ այնպէս չէր ինչպէս այժմ. — Եպիսկոպոսները պիտի կին ունենան, պատկերները չպիտի լինին Եկեղեցում և այլն և այլն։ Առա պատճառը նա է, որ ինքն կրթուել է Եւրոպայ և

կարծումէ թէ Լուսաւորչի Եկեղեցին ի սկզբանէ մի քանի Եւրոպական Եկեղեցւոյ պէս էր, Եպիսկոպոսներն էլ նոցա պէս կանամբի: Ողորմելի Մշակը չէ տեղեակ, որ մեր Լուսաւորիչը պատկռած էր նախ քան հոգեորական կոչում ստանալն. ստանայով Հայրապետութիւն, նա թռչ զեց կին, որդի և ամեն բան, առաւ Յիշ սուսի խաչը և զնաց նորա ետեից: Մեծ բաղդաւորութիւն էր մեզ համար, որ մեր ուսաւորուած Մշակը թողէր կին, որդի և այն (եթէ ունի), առնէր Քրիստոսի Խաչը և գնար նորա ետեից: Ի հարկէ եթէ մեր հոգեորականութիւնը արգելէր Մըշ շակին իւր այս նպատակի մէջ, երեխ նա հարազատ զաւակ չէ Լուսաւորչին, ու բեմն հարկաւոր է լսել Մշակի քարոզութեան. բայց որովհետե և այժմ իսկ մեր Եկեղեցին այդպիսեաց շատ սիրով է ընտ գունում, ուրեմն մեր Եկեղեցին Լուսաւորչի հարազատ Եկեղեցին է, իսկ Մըշ շակին է նորա անհարազատ զաւակը: Եւ որովհետե ինքն իսկ Մշակին ասում, — «Վազուց Մշակը բարձրացրել է իւր դրօշակը, որի վերայ զրած է վերադառնանք մաքուր սկզբնական Լուսաւորչի Եկեղեցւոյն: , Ըյժմ արդէն յարմար ժամ է: Մշակը, որ ցանկանումէր վերազ գառնալ գէպ ի Լուսաւորչի Եկեղեցին առանց իմանալոյ նորա սկզբնական մաքուր նշանակութիւնը, այժմ լաւ հասկանալից յետոյ, գէ թող իւր ասածի համաձայն վերադառնայ աշխարհասիրութիւնից գէպ ի ուղղափառ կրօն մեր:

Երշտէ. Ծառ օւղեղ է ասածներդ, ես այժմ սիրով համոզվում եմ, որ Մշակը կրքից և Եւրոպական կրթութիւնից

ստիպուած կարծում է լինել Հայոց Եկեղեցւոյ սկզբնական դրաւթիւն Եւրոպացւոց պէս, բայց միթէ՞ վատ է ասում Մշակը, որ Եւետարանը չի հարկաւոր 20 կապէկից աւելի գնահատել, որ ամենայն մարդ կարողանայ առնել կարդալ և հասկանալ:

Երտե՞մ. Մշակի այդպիսի խօսքերը ոչ թէ մի ուրիշ բաներ են, եթէ ոչ մի ատելութեան նշաններ դէպի հոգեորականութիւնը, միթէ Մշակը զգիալ՞, որ Եւետարանը՝ յորում գտանվում է ոչ պակաս քան հարիւր թերթ թուղթ, այնպէս էլ նորա կազմը և ուրիշ նորա ծախսերը, չէ կարելի գնահատել շատ շատ 20 կոպ: Եթէ մի Եւետարան գընահատուի շատ շատ 20 կոպ. Մշակ լրազիրը համեմատելով ծախսի և ամեն հանդամանքներով Եւետարանի հետ պէտք է երկու կողէնու գնահատել, գէ թող լինի զոնեա շատ շատ 5 կոպ. մանաւանդ, որ Խմբազիրն ինքն կարողութեան տէր մարդ է և դրանով մեծ ծառայութիւն կանէր ազգին: Ուրիմն գէ թող Մշակը վերադառնայ ատելութիւնից գէպ ի սիրելութիւն:

Երտե՞մ. Ըսածներդ ոչ թէ միայն ճըշմարիտ են, այլ և զովութեան արժանի, բայց խնդրեմ պատմես ինձ թէ ի՞նչ մտքով է Մշակը ասում. — Ապէտք է վերադառնալ այն ժամանակներն, որ հոգեորականութիւնը իւր մտաւոր զարգացմանը ժողովրդի զարդ գացման մակերեսոյթից աւելի բարձր էր եղն,, : Միթէ այս այսպէս է:

Երտե՞մ. Արելի, Մշակի ամենայն գընուածք երբ առնես իւր հեղինակի անձ-

նականի վերայ՝ այն ժամանակ աւելի լաւ կհասկանաս դորա զօրութիւնը, որ Մշակը նորա համար է այդպէս ասում, որ ինքն էլ աշխարհական է, ուրեմն ինքն աւելի բարձր է ուամամբ քան հոգեորականութիւնը՝ և ինքն է միմիայն այդ կոչման արժանի, բայց չէ ցանկանում մտանել յայդ կոչումն ցորչափ որ իւրեան չունի արժանաւոր չնիւրներ. այսպէս նորա ամեն աշխատութիւնը այն է որ իւրեան բարձրացնի ամենից: Ի հարկէ, եթէ նա այդպիսի գաղափար չունենար՝ կմտածէր, որ մենք մի երեք չորս մարդ ունինք Մոսկվայ, Պիտերսուրկ (Դուտա էլ իդեռական էն Մշակէ կարծէւով), մի երեք չորս մարդ ունինք Տիխիս, մի երեք չորս Վարաբաղ և միւս մանր քաղաքներում, թող ուրեմն ընդ ամենն լինի հարիւր, երկու հարիւր՝ վերջապէս հազար հոգի աշխարհականներից, որ ժառանգում են թէ լաւ թէ վատ ուսումնական անուն, իսկ մնացեալներն էլ մեր հասարակութեան յայտնի է ամենին, որ այնքան անզրագէտին, որ ումանիք հազիւ են կարողանում կարդալ մի որ և իցէ հրատարակութիւն և կարդացածներն էլ զանազան կերպի են հասկանում՝ առանց որոշելոյ նորա հոգին՝ չար և բարի կողմն: Ինչպէս գու, սիրելի եղբայր, կարդացել ես Մշակը և հաւատացել նորա՝ իբրեւ տպագրուած մի բան, կարծել ես թէ այդ գրուածը անկեղծ և հաւատարիմ ազգասիրի աշխատութիւն է. ի հարկէ մտածել ես՝ եթէ վեասակար բան լինի՝ չէ կարելի տպագրել, բայց չես կարողացել հասկանալ, որ շատ և շատ բաներ

կարելի է տպագրել, բայց շատ և շատ քիչ բաների կարելի է հաւատալ և ընդունել՝ և ոչ ամեն գրուածների: Բայց հոգեորականք այսպէս չեն, տասից մէկն հազիւ թէ տգէտ և անօգուտ են, իսկ մնացեալները բաւականին լաւ հասկանում են մտածել, դատել, դաստիարակել հասարակութիւնը: Բաց ի դուրանից՝ հոգեորականք ուրիշ ազգ չեն՝ և աշխարհականք ուրիշ, ինչպէս բաժանում է Մշակը միւսը մէկից՝ մէկին յիմար ասելով՝ միւսին իմաստուն, այլ մի և նոյն ազգից են և միենոյն ազգի զաւակները, աշխարհականաց լուսաւորութիւնը վերաբերում է հոգեորականութեան, հոգեորականաց լուսաւորութիւնը աշխարհականաց, մէկի բաղաւաւորութիւնը միւսի համար ուրախութիւն է, ինչպէս հօր և որդւոյ մէջ, հոգւոյ և մարմնոյ մէջ, և ոչ կիրք, նախանձ, ինչպէս տեսնվում է Մշակի մէջ:

**Երշակ.** Ես աներկեայ այժմ համոզուեցոյ, որ Մշակը ոչ թէ միայն անօգուտ, այլ և վեասակար հրատարակութիւն է:

**Երան.** Կեզ յայտնի է, որ մեր ազգի կործանման սկզբնապատճառը հպարտանմիաբանութիւնն էր և ատելի նախանձը, և թէ իսկ այժմ՝ մեր ազգը որքան և որքան մեծ կարօտութիւն ունի սիրոյ և միաբանութեան: Այժմեան դարի մէջ՝ օգտակար կասուի այն հրատարակութիւնը՝ որ ազգի մէջ սէր՝ միաբանութիւն, խոնարհութիւն և քաղցրութիւն սերմանի և ոչ երկպառակութիւն և հակառակութիւն: Մշակը այն օրից որ սկսեց հրատարակութիւնը՝ ըս-

կսեց երկպառակութեան ողին մոցնել ազգի մէջ։ Նոգեորականութիւնը, որ միակ մնացած մեր մխիթարութիւնն է՝ որոշեց աշխարհականներից, հոգեորականաց ազգի առաջև ներկայացրեց՝ իրարեւ վնասակար անդամք ազգութեան զլիին։ Հայոց Երկեղեցւոյ պարզութիւնը համարեց նա խառն նորանոր ծէսերով, որով կարծեց սիրոյ և քաղցրութեան թելը կտրել հոգեորականաց և աշխարհականաց մէջ։ Եզդի ուսումնականաց անուանեց նա կոչըտիան, կղերականաց էլ ո՞չէս։ Մի խօսքով լուս բարի քարոզեց, բարին չար, յիշարին իմաստուն, իմաստունին յիմար, արժանատորին անարժան, անարժանին արժանաւոր ելն, ելն։ Եյսպիսի հրատարակութիւնը արդեօք կարելի է անուանել օգտակար։ Եյսպէսի սկզբանէ անտի մեր ազգի թշնամիք իւրեանցից են գնացել և ազգասիրական անուամք մոլորացրել են շատերին, ինչպէս այժմ անում են բողոքականք։ Եւետարանը ձեռքները առած փողոցներում, հրապարակներում, զանազան անկիւններում \*) պարզամիտ մարդոց իւրեանց զլիին հաւաքած մոլորացնում են նոցա, ասելով. — “ Եյս ինչ բանը Եւետարանում կայ, այս ինչը չկայ, հեշտասիրութիւնը աւետարանում կայ,

բայց ժուժկալութիւնը չկայ, հակառակութիւն աւետարանում կայ, բայց սէրը միութիւնը չկայ։ Եյսպատճառաւ Եւետարանը մէջ տեղ գրած ամենայն ուժով հակառակութիւն են անում մինչեւ որ մի խեղջ և ողորմելի միամիտ քրիստոնէի մոլորացնում են՝ Քրիստոսը բաժին բաժին անելով։ Ելն։, Եյսպիսեաւ մոլորացնում են միամիտներին հաւատացնելով նոցա, որ ամեննեին իւրեանք քրիստոնեայ չեն և նոցա ամեննեին փրկութիւն չկայ մինչեւ չմոլորուին և բողոքականութիւն չընդունին։

Եյս բոլոր մեր խօսակցութիւնը պիտի ողորկուի։ Երտբար, պատռական լրացքին խնդրելով շնորհ ի տպագրութիւն, որովհետեւ առաւել լոելն լաւ չէ։

Երշտ։ Ես խորհուրդ չեմ տալ այս խօսակցութիւնների տպագրութեան, ուրովհետեւ Մշակը խայտառակութիւններ կանի հազար և մի տեսակ ֆէլքոններով, որով կպակասի մեր յարգանքը միամիտ հասարակութեան առաջեւ։

Երտաճ. Ոիրելի, դուք շատ և շատ սխարվում եք այդ մոքով։ միթէ մարդ իւր անձնական յարգանքին պիտի զոհի Եզդի և Երկեղեցւոյ յարգանքը, այդ անելով մենք ևս կդառնանք Մշակ, այլ անշուշտ պէտք է աղաչել։ Երտբարին։ որ իւր պատռական թիրթերի մէջ տեղ տայ այս մի քանի խօսակցութեանս, ուրովհետեւ նա (Մշակը) կխայտառակի ազգի առաջն՝ որ իւր կրքերից սախապուած բան կխօսի և ոչ ծշմարտութիւնից։ Ճշմարտութիւնը միշտ յաղթող է և պիտի յաղթէ։ Ոիրելի, ամենայն մարդ կարով է շատ բան խօսել և շատ բան

(\*) Թէ ինչպէս ես գնացի Բաքուայ քաղաքի բողոքականաց ժողովարանը թէ ինչեր նկատեցի նոցա մէջ, թէ ինչպէս երկու անգամ՝ քարոզեցի ժողովարանում ցցց տալով Լուսաւորչի Եկեղեցւոյ որբութիւնը, բողոքականաց մոլորութիւնը և նոցա ուղղութեան միջոցները՝ ելն, ելն այս ամենս մանրամասն կղրեմ ուրիշ ժամանակ։

գրել, ասուած է. — “Եթէ լաւ չկարողանամ խօսել, վատը խօ՛ կայ: , , Քայց բանը խօսելոյ և գրելոյ վերայ չէ, բանը նորա նիւթի վերայ է: Եզրը միշտ պահանջում է ուշը, միտքանուն-նիւն, +աղց-ըստ-նիւն, պատիւ ծնողաց, պատուառ-որաց են: Քայց ես միշտ խնդրում եմ և պի-տի խնդրեմ իմ եղբայրներից առաւել քան զամենեսեան, — Նեղս-նիւն և ուշը, որ այս երկու սկզբնական աղբիւրներիցն են բղիւզում երանութեան և կենդանու-թեան ջուրը:

Ա Ր Ա Մ

4 - ՀԱՅԱՀԱՅ 1876 թ.

Տ Վ Բ. Դ Ա Շ Ա Ր

## ԱԶԳԱՅԻՆ

Ն Ո Ւ Ե Ր

Ն. Նախիջեւանցի գերձակ Մեծարգոյ Պ. Պողոս Շերոնեան Մազաքեանց ի նը-պաստ Ա. Գէորգեան ձեմարանի Մայր Աթոռոյու ժաման և հինգ ուուրի նուիրած լինելով՝ յատուկ շնորհակալութեամբ կհրատարակեմք ի գիտութիւն մերազ-նէից:

ՓՈՐՉ ՀԱՆԴԻՍ.

սեայ մի հանդէս եւս յաւելացաւ, որոյ առաջին թիւը շնորհակալութեամբ ըն-կալանք:

Փորձոյ Խմբագիր - հրատարակիչն է Մեծապատիւ Պ. Ա. Բգար Յովհաննէսեան՝ եւ ըստ մեծի մասին ազնիւ եւ եռան-դուն անձինքներէ բաղկացեալ աջակից օգնականներ ունի: — Փորձոյ տարեկան բաժանորդագինն է ամենայն տեղ 10 ուուրի, եւ հրատարակութիւնը տարւոյս Յուլիս ամսէն սկսած է եւ երեք ամիսը մի անգամ ի լոյս պիտի գայ:

Փորձոյ առաջին թիւը կարող է գրա-ւական գառնալ՝ որ նա օրինաւոր հայ-կարանութեան պիտի հետեւի եւ ըստ բաւականին փորձառու՝ հեռատես եւ ողջամիտ միանգամայն բարենախանձ բովանդակութեամբք պիտի փայլի Հայ-կական լրագրական ասպարիզին մէջ, հասուն եւ լուրջ գիտողութեամբք եւ ազգօգուտ տեսութեամբք պիտի յաճա-խէ կարօտ միտքերը մշակել եւ զարգա-ցնել, միանգամայն օտարոտի եւ ցնորա-կան գաղափարներով տոգորուած մոլո-րելոց գեղեցիկ փորձ տալ՝ գիտնալով որ մեր լրագրութեան պարզած կամ պար-զել ջանացած ամեն նպատակ՝ տեսու-թիւնք եւ աշխատութիւնք Հայոց վիճա-կի եւ դրութեան համաձայն չափելով եւ կշռելով պիտի արտայայտուին, զգուշանալով միանգամայն՝ զի մեր կա-րողութենէ վեր եւ մեր Հայոց դրութեան խսպառ անյարմաք՝ յանդուգն եւ վտան-գաւոր ընթացիւք գահալէժ արգասիք-ներ չծնանին:

Ինչպէս կանխաւ ծանուցեալ էր, մեր Ազգային լրագրութեան մէջ Ազգային եւ Գրականական ՓՈՐՉ անուն եռամ-